վեր էին կենում, շտապով տան գործերը վերջացնում, որ մայրը պիտի նրանց լավ հագցնի, թույլ տա տանից հեռանան՝ գնան իրենց դաղօնէրի հետ խաղան[118]։ Մի քահանա կամենալով ցույց տալ, թե իր ժողովրդի համար ինչ մեծ աշխատանք է տարել, պարծենում էր խոսելով եկեղեցու վարագույրի մասին՝

«Էհ, քանի՜-քանի՜ աղջիկ եմ ես էս վարագույրի առջև fուրացրէլ»։

Բայց ոչ միայն աղջիկներն էին այսպիսի միջոցով իրար fուրանըմ, այլև տղաներն էին ախպէրանըմ։ Պատահում էր, որ ինչպես ընդունված էր Հին Բայազետից Նոր Բայազետ (Կամո) գաղթած հայերի մեջ, fուր ու ախպէր էին դառնում աղջիկն ու տղան։ Նրանք գալիս էին եկեղեցի և քահանայի առջև Ավետարանը համբուրում։ Այնուհետև ոչ ոք իրավունք չուներ որևէ կեղտոտ բան կասկածել նրանց փոխհարաբերությունների մասին։ Տղան ախպոր պես պաշտպանում էր աղջկան բոլոր դեպքերում, բայց և զրկվում էր նրա հետ ամուսնանալու իրավունքից։ Ահագին խայտառակություն և ծայրագույն անբարոյականություն էր համարվում այդ քույր-եղբայրական կապին որևէ ֆիզիկական մերձեցման բնույթ տալու փորձը։ Հայտնի չէ՝ արդյոք մեկի ամուսնության դեպքում մյուսը որևէ ձևով ունենում էր միջամտություն նրա ընտրության մեջ։ Բայց այնուհետև էլ մինչև խորին ծերություն այդ երկու անձնավորությունները պահպանում էին նախկին մտերմությունը և փոխադարձ պարտականության զգացմունքը, այս դեպքում էլ երկուսն էլ ամեն բան իրար պիտի ասեին, ամեն աշխատանքի մեջ իրար օգնեին, ամեն ուրախություն և դարդ իրար հետ բաժանեին։

118 Ցուցմունք Հայկանուշ Սաֆարբեկյանի (Երեմյանի)՝ Սիսիանում։